ԳԵՏԱՓ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արամ Մովսիսյան

Հեռախոս՝ +374 98. 912090

Բնակչություն՝ 2231

Գետափ գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզի տարածքում: Գյուղը հիմնադրվել է 1828թ Պարսկաստանի Սալմաստ գավառի Խոյ գյուղից գաղթած հայերի կողմից: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1310մ բարձրության վրա, շրջապատված լեռներով, փռված է Երևան Մեղրի մայրուղու ձախակողմյան մասում: Վարչական տարածքը կազմում է 1977հա : Մարզկենտրոնից հեռավորությունը 3կմ է, Երևանից 119կմ: Գյուղի միջով հոսում է Եղեգիս գետը:
Համայքում կա 450 առանձնատուն, և 8 երկհարկանի բնակելի շենքեր, ընդանուը 39044քմ տարածքով:
Գյուղի կլիման ցամաքային է, ձմեռը չափավոր ցուրտ է, ոչ երկարատև, գարունը տաք է, երկարատև, ամառը շոգ է, աշունը՝ տաք:
Գերակշռում են հաստատուն պարզ եղանակները:
Համայքը հիմնականում զբաղվում է բուսաբուծությամբ և այգեգործությամբ:
Գյուղատնտեսության բնագավառում զբաղված են բնակչության 75%-ը: Գյուղում արտադրվում է ցորեն, գարի, բանջարբոստանային մշակաբույսեր, խաղող: Համայքի վարելահողերից ոռոգելի են 153հա:
Գյուղն ունի դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզ, բուժկետ:
Համայքի տարածքում է գործում է Գետափի գինու գործարանը: